ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010 Երևան, Վազգեն Սարգսյան 3/8, հեռ. 594-094
էլ. փոստ info@moj.am

№ _____

«23» _____10_____ 2018 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-ԻՆ ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ICSID NO. ARB/18/28 ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԳՈՐԾՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

2018 թվականի հոկտեմբերի 23-ին՝ ժամը 18:00-ին, ՀՀ արդարադատության նախարարության շենքի 7-րդ հարկում գումարված՝ Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի վարույթում 2018 թվականի օգոստոսի 3-ին մուտքագրված ICSID NO. ARB/18/28 արբիտրաժային գործով Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանելու համար փաստաբանական և իրավաբանական ծառայություններ մատուցող մասնագիտական ընկերության թեկնածուի ընտրության գործընթացի կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստին մասնակցում էին՝

1. Հանձնաժողովի նախագահ, Արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը,
2. Հանձնաժողովի անդամ, Արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանը,
3. Հանձնաժողովի անդամ, Արդարադատության նախարարության մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության պետ Արմեն Գալստյանը,

4. Հանձնաժողովի անդամ, Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի տնօրեն Տիգրան Մարկոսյանը,
5. Հանձնաժողովի անդամ, փոխվարչապետ Տ.Ավինյանի օգնական Վահե Դանիելյանը,
6. Հանձնաժողովի անդամ, Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության իրավաբանական վարչության պետի տեղակալ Լուսինե Ոսկանյանը,
7. Հանձնաժողովի քարտուղար, Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի փորձագետ Լիլիթ Պետրոսյանը:

Հանձնաժողովի նիստն իրավազոր է, Հանձնաժողովի նիստին մասնակցելու իրավունք ունեցող անձանց թիվը վեցն է:

Հանձնաժողովի նիստի օրակարգում ներառված են.

Ներդրումային Վեճերի Կարգավորման Միջազգային Կենտրոնի վարույթում 2018 թվականի օգոստոսի 3-ին մուտքագրված ICSID No. ARB/18/28 արբիտրաժային գործով Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանելու համար մրցութային եղանակով փաստաբանական և իրավաբանական ծառայություններ մատուցող մասնագիտական ընկերության թեկնածուի ընտրության անցկացման և արդյունքների ամփոփման հարցը:

<u>Ներդրումային Վեճերի Կարգավորման Միջազգային Կենտրոնի վարույթում 2018 թվականի օգոստոսի 3-ին մուտքագրված ICSID No. ARB/18/28 արբիտրաժային գործով Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանելու համար մրցութային եղանակով փաստաբանական և իրավաբանական ծառայություններ մատուցող մասնագիտական ընկերության անցկացման և արդյունքների ամփոփման հարցը,</u>

Արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանը Հանձնաժողովի անդամներին հայտնեց, որ Ներդրումային Վեճերի Կարգավորման Միջազգային Կենտրոնի վարույթում 2018 թվականի օգոստոսի 3-ին մուտքագրված ICSID No. ARB/18/28 արբիտրաժային գործով Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանելու համար անցկացվող մրցույթին մասնակցելու հրավեր է ներկայացվել Global Arbitration Review առցանց պարբերականի

(http://www.globalarbitrationreview.com) կողմից “GAR30” (11-րդ խմբագրություն) դասակարգման աղյուսակի մինչև 20-րդ հորիզոնականը զբաղեցնող միջազգային կազմակերպություններին, որոնցից 10-ը արձագանքել են ներկայացված հրավերին: Մասնավորապես, նրանցից 5-ը ներկայացրել են մրցույթին մասնակցելու առաջարկ՝ համաձայնելով հրավերում նշված պայմաններին, մեկը ներկայացրել է ներկայացուցչության երկրորդ և երրորդ փուլի համար առաջարկ՝ շեղվելով հրավերում սահմանված առավելագույն գնից, իսկ մնացած 4-ը հրաժարվել են մրցույթին մասնակցելուց: Այնուհետև, Ա.Հովհաննիսյանը ներկայացրեց մրցույթի համար դիմած միջազգային կազմակերպություններին, ինչպես նաև նրանց կողմից ներկայացված առաջարկները:

Արդյունքում, Հանձնաժողովն իրականացրեց մասնագիտական կազմակերպությունների դասակարգում 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի վարույթում 2018 թվականի օգոստոսի 3-ին մուտքագրված ICSID NO. ARB/18/28 արբիտրաժային գործով Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանելու համար փաստաբանական եվ իրավաբանական ծառայությունների գնման կարգը հաստատելու մասին» Արդարադատության նախարարի թիվ 541-Ա հրամանով հաստատված կարգով սահմանված չափանիշների հիման վրա՝ կազմելով ամփոփիչ դասակարգման ցանկ.

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	**մասնագիտական կազմակերպության կողմից պահանջվող ֆինանսական միջոցների չափը,**	**տվյալ կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության շահերի պաշտպանության նպատակով ներկայացված մասնագետների և փորձագետների կազմի և կառուցվածքի որակական**	**տեղական ենթախորհրդատուի փորձը,**	**բոլոր այն էական նշանակություն ունեցող հատկանիշներ, որոնք անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության շահերը լավագույնս պաշտպանելու համար:**	**Ստացված գնահատականների հանրագումար**

		հատկանիշները,			
Baker Mckenzie	5	4	4	5	18
Wilmer Cutler Pickering Hale and Dorr	3	5	3	5	16
Clifford Chance	4	4	4	5	17
CMS	4	4	4	3	15
Cleary Gottlieb Steen & Hamilton					
Lalive	3	3	4	4	14

Ուսումնասիրության ամփոփման արդյունքում ամփոփիչ դասակարգման ցանկում առաջին հորիզոնականը զբաղեցրեց "Baker Mckenzie" միջազգային ընկերությունը:

Քննարկումներից հետո հարցը դրվեց քվեարկության: Կողմ քվեարկեցին նիստին մասնակցող Հանձնաժողովի 6 անդամները, դեմ քվեարկեցին 0 անդամ(ները) և որոշվեց.

Ներդրումային Վեճերի Կարգավորման Միջազգային Կենտրոնի վարույթում 2018 թվականի օգոստոսի 3-ին մուտքագրված ICSID No. ARB/18/28 արբիտրաժային գործով Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանելու համար Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս փաստաբանական և իրավաբանական ծառայություններ մատուցելու համար ընտրել "Baker Mckenzie" միջազգային ընկերությանը*:*

Օրակարգի հարցերը սպառվեցին և Հանձնաժողովի նիստը հայտարարվեց փակված ժամը 19.10-ին:

Արձանագրությունը կազմվել է 23.10.2018թ. և բաղկացած է 5 թերթից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՋԵՅՆԱԼՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ Տ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ ՎԱՀԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ ԼՈՒՍԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ